# ԱՐՊԱՆԻՎ ՍՊԸ


| | |
|---|---|
| Հասցե | ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 122, 0018 |
| Տնօրեն | Արտյոմ Խանդանյան |
| ՀՎՀՀ | 09209297 |
| Բանկ | Ինեկոբանկ ՓԲԸ |
| Հ/Հ | 2050022326481001 (AMD) |
| Հեռ./Ֆաքս | (+374)10-541507; (+374)10-541509 |
| Էլ. հասցե | |
| Կայք | automax.am |


ք. Երևան
02.02.2026 թ.

03.02.26 թ.

*<<Երևանի Ավտոբուս>> ՓԲԸ*

*Տնօրեն պարոն՝ Բ. Կիրակոսյանին*

Հարգելի պարոն Կիրակոսյան,

Ձեզ եմ ներկայացնում N «*ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1*» ծածկագրով համաձայնագիրը «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված և կնքված՝ երկու օրինակից, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երեշխիքի ձևով:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքներով,

<<Արպանիվ>> ՍՊԸ տնօրեն՝ Ա.Խանդանյան

«ԱՐՊԱՆԻՎ» «АРПАНИВ» «ARPANIV» 09209297

Կ.Տ.

Մուտք 283
03.02.26թ

Պաշտոնը՝ ____________ Անուն Ազգանուն
Կ.Տ. (ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2025 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 գնման պայմանագրի

ք. Երևան «03» փետրվարի 2026թ.

«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ. Կիրակոսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Խանդանյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2025 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, կրկին նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար հատկացված ևս 34,554,239.34 (երեսունչորս միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր երեսունինը դրամ երեսունչորս լումա) ՀՀ դրամի՝ ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1.1. Հաստատել Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն՝ ________ Բ. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան, Նար-Դոս 122
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022326481001
ՀՎՀՀ 09209297

Տնօրեն՝ ________ Ա. Խանդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*2025 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված*
*N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 ծածկագրով պայմանագրի*
*«03» ապրիլի 2026թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | անվանումը | Չ/մ | ընդհանուր քանակը | վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | | 2025թ. | 2026թ. | | | | | | | | | | | Ընդհանուր գինը |
| | | | | | XII | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 1 | 31442100/505 | Կուտակիչային մարտկոց 6CT-170A Zhong Tong Ավտոբուսների համար | հատ | 700 | 7,438,759.86 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 | 41,992,999.20 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հրապարակված, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ԳՆՈՐԴ**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն __________ [illegible] Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան, Նար-Դոս 122
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022326481001
ՀՎՀՀ 09209297

Տնօրեն __________ Ա. Խանդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**INECOBANK**

30.01.2026 № G802

**ԵՐԱՇԽԻՔ N EA26/00054**
**(պայմանագրի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 12/12/2025թ.-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 պայմանագրից և կնքվելիք Համաձայնագիր N 2-ից /այսուհետ միասին՝ Պայմանագիր/ բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 3,456,000.00 (երեք միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 163078035496 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխիքի ելքագրման ամսաթվից, որը նշված է սույն Երաշխիքում և գործում է մինչև 30/05/2028թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **a.arakelyan@promotion.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին **www.procurement.am** հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԽՈՇՈՐ ԲԻԶՆԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ**
**ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Կատարող՝ Մանյա Բաղդասարյան
Հեռ.՝ +374 10 510510 (5447)

**INECOBANK**

30.01.2026 № G800

**ԵՐԱՇԽԻՔ N EA26/00056**
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 12/12/2025թ.-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 պայմանագրով և կնքվելիք Համաձայնագիր N 2-ով /այսուհետ միասին՝ Պայմանագիր/ նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,184,000.00 (հինգ միլիոն հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կամ բենեֆիցիարի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 163078035496 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխիքի ելքագրման ամսաթվից, որը նշված է սույն Երաշխիքում և գործում է մինչև 30/05/2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **a.arakelyan@promotion.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/76-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին **www.procurement.am** հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԽՈՇՈՐ ԲԻԶՆԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ**
**ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ** — **ԱՐՄԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Կատարող՝ Մանյա Բաղդասարյան
Հեռ.՝ +374 10 510510 (5447)